ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանկի կողմից պատրաստված տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող

2020թ. ընթացքում Բանկին գրեթե հաջողվեց իրականացնել իր առջև նախորդ՝ վերանայված հեռանկարային զարգացման ծրագրով դրված գրեթե բոլոր խնդիրները: Ցավոք, տեղի ունեցավ Արցախյան պատերազմը, որի ծանր հետևանքները անմասն չթողեցին նաև Բանկին, ինչի արդյունքում որոշ հոդվածների գծով շեղումներ արձանագրվեցին նախանշված ցուցանիշներից: Իսկ որոշ ոլորտներում հաջողության հասնելու կարևոր հիմք հանդիսացան նոր տեխնոլոգիաներին ժամանակին արձագանքելը, Բանկի կողմից սպասարկվող ապրանքների ու ծառայությունների բազմազանությունը և դրանցից օգտվելու հաճախորդների հարմարավետության անընդհատ բարձրացումը, Բանկի աշխատակիցներն ու Բանկի կառավարման համակարգը և այլն:

Գործունեության հիմնական ցուցանիշները

2020 թվականի ընթացքում Բանկի ակտիվներն աճել են 109,604 մլն ՀՀ դրամով (14.9%-ով)՝ կազմելով 847,796 մլն ՀՀ դրամ, ընդ որում, 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակտիվների 74.9%-ը կամ 635,054 մլն ՀՀ դրամ կազմել են Բանկի՝ հաճախորդներին տրվող ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկային ներդրումները և փոխառությունները:

2020 թվականի ընթացքում Բանկը շարունակել է վարկավորման գործընթաց ծավալել, արդյունքում, Բանկի կողմից հաճախորդներին տրվող ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկային ներդրումները և փոխառությունները աճել են 71,632 մլն ՀՀ դրամով (12.7%-ով): Բանկի էական ուղղություններից շինարարության, առևտրի և սպառողական վարկերի տեսակարար կշիռը գերազանցում է 10%-ը, սակայն հիփոթեքային և գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերը ունեն համեմատաբար փոքր կշիռներ. հիփոթեքային վարկավորման ծավալների ավելացումը նախատեսվում է Բանկի ռազմավարությամբ: Շինարարության ոլորտին տրամադրված վարկերն ավելացել են մոտ 37.6%-ով կամ 26.4 մլրդ ՀՀ դրամով: Առևտրի ոլորտին տրամադրված վարկերն ավելացել են մոտ 12.2%-ով կամ 18.6 մլրդ ՀՀ դրամով: Ոլորտը ֆինանսավորվել է հիմնականում սեփական ռեսուրսների հաշվին 99.7% -ով: Սպառողական ոլորտին տրամադրված վարկերն ավելացել են մոտ 59.4%-ով կամ 34.0 մլրդ ՀՀ դրամով: Ոլորտը ֆինանսավորվել է սեփական ռեսուրսների հաշվին 99.8% -ով: Ոլորտին տրամադրված վարկերը հանդիսանում են պորտֆելի դիվերսիֆիկացման հիմնական աղբյուր, այդ պատճառով Բանկը շարունակելու է հանդես գալ շուկայում նոր պրոդուկտներով և փորձել ներգրավել պարտաճանաչ հաճախորդներ նաև մրցակից բանկերից:

Միջոցների ներգրավումը

2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորությունները կազմել են 802,086 մլն ՀՀ դրամ:

Պարտավորությունների ամենախոշոր տարրը ներգրավված ժամկետային ավանդներն են՝ 42.5%: Համավարակով և պատերազմով պայմանավորված՝ վերջինս նախորդ տարվա համեմատ նվազել է մոտ 4.2%-ով և կազմել 340,916 մլն ՀՀ դրամ: Չնայած համավարակով և պատերազմով պայմանավորված՝ ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդները նախորդ տարվա համեմատ նվազել են 8.3%-ով, Բանկը շարունակում է մնալ առաջատարներից մեկը վերոնշյալ ցուցանիշի գծով: 31.12.2020թ. դրությամբ այս պորտֆելի մեծությունը կազմել է 273,393 մլն ՀՀ դրամ ՀՀ դրամ:

Ցպահանջ միջոցները կազմել են ընդհանուր պարտավորությունների 32.7%-ը՝ կազմելով 262,717 մլն ՀՀ դրամ: Նախորդ տարեվերջի համեմատ ցուցանիշը աճել է 21.5%-ով: Վերջինս պայմանավորված է իրավաբանական անձանց հաշիվների աճով՝ 22,679 մլն ՀՀ դրամով:

31.12.2020թ. դրությամբ Բանկի շահույթը կազմել է մոտ 88.0 մլն ՀՀ դրամ:

2020թ-ի ընթացքում Բանկի ընդհանուր կապիտալը՝ պայմանավորված կապիտալի տարրերի (բացառությամբ՝ շենքերի և շինությունների վերագնահատումից, ինչպես նաև ընթացիկ տարվա ֆինանսական արդյունքից) ավելացմամբ, ավելացել է 4.7%-ով՝[1] դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմելով 45,710 մլն դրամ: Բանկի կանոնադրական կապիտալը 2020թ. երրորդ եռամսյակի ընթացքում համալրվել է 2,080 մլն ՀՀ դրամով: Կապիտալի համարժեքության նորմատիվը տարվա ընթացքում գտնվել է բավարար մակարդակի վրա և դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 13.01% (սահմանված նվազագույն ցուցանիշ Ն1-ը՝ 12% է):

Բանկի հաճախորդները

2020թ.նույնպես Բանկի խնդիրներից է եղել ավելացնել հաճախորդների բազան: Այս իմաստով Բանկի համար առաջնային է եղել հաճախորդների քանակական աճը՝ ուղեկցված վերջիններիս ֆինանսների որակական հատկանիշներով և գործարար իմիջով: Բանկի համար սկզբունքային է հաճախորդներին արհեստավարժ և համալիր սպասարկումը, ապրանքների և ծառայությունների մատուցման ստանդարտացված և անհատական մոտեցումների համադրումը, նրանց նկատողություններն ու առաջարկություններն ընդունել որպես հնարավորություն՝ զարգացնելու բիզնեսը, գնահատել հաճախորդի ժամանակը:31.12.2020թ. դրությամբ Բանկի հաճախորդների թիվը կազմում 170,091 հաճախորդ, որից 160,014-ը ֆիզիկական անձինք են, իսկ 10,077-ը՝ իրավաբանական անձինք:

---

[1] Համեմատությունը՝ 31.12.2019թ. անկախ աուդիտի կողմից ստուգված ցուցանիշի նկատմամբ:

Մասնաճյուղային ցանց

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևան քաղաքում, որի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Նալբանդյան 48 և ներկայումս ունի գործող վաթսուներկու մասնաճյուղ՝ քսանինը՝ Երևանի Կենտրոն (7 մասնաճյուղ), Ծենգավիթ (5 մասնաճյուղ), Էրեբունի (3 մասնաճյուղ), Մալաթիա-Սեբաստիա (3 մասնաճյուղ), Արաբկիր (4 մասնաճյուղ), Ավան (2 մասնաճյուղ), ՆորՆորք (2 մասնաճյուղ), Քանաքեռ-Զեյթուն, Դավթաշեն և Աջափնյակ վարչական շրջաններում, երեքը՝ Գյումրի քաղաքում, երկուսը՝ Վանաձոր քաղաքում, մեկական՝ Թալին, Կապան, Քաջարան, Արմավիր, Արարատ, Մասիս, Արտաշատ, Աշտարակ, Վարդենիս, Նոր Հաճըն, Դիլիջան, Ագարակ, Աբովյան, Գավառ, Ալաշկերտ, Սևան, Արթիկ, Ապարան, Իջևան, Տաշիր և Հրազդան քաղաքներում և հինգը՝ ԼՂՀ-ում՝ Ստեփանակերտ (2 մասնաճյուղ), Մարտունի, Մարտակերտ, Ասկերան քաղաքներում:

Բանկը շարունակում է իրականացնել ՀՀ և ԱՀ նույնիսկ ամենահեռավոր համայնքներում բնակվող մեր հայրենակիցների համար հասանելի լինելու առանցքային նպատակը: Հաճախորդների սպասարկումը հարմարավետ և նորարար դարձնելու համար՝ գործունեության վայրը փոխել են «Արշակունի», «Էրեբունի», «Զարբախ» և «Արաբկիր» մասնաճյուղերը: «Արշակունի» և «Զարբախ» մասնաճյուղերը հասցեափոխության հետ մեկտեղ վերանվանվել են «Գրիգոր Լուսավորիչ» և «Արտաշիսյան» համապատասխանաբար: Հասցեափոխված մասնաճյուղերը համապատասխանեցվել են Խորհրդի որոշմամբ սահմանված՝ մասնաճյուղերի ռեֆորմատավորման նոր սկզբունքներին, ըստ որի՝ մանսաճյուղերն այսուհետ դիտարկվելու են որպես ակտիվ վաճառքի կետեր, իսկ աշխատողները՝ սպասարկող-վաճառողներ: Վերջինս ենթադրում է, որ այն գործառույթները, որոնք անմիջականորեն կապված չեն ուղղակի վաճառքներ իրականացնելու հետ, տեղափոխվել են գլխամասային գրասենյակ՝ համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվելու նպատակով: Բանկի ղեկավարությունը մասնաճյուղերի նման ընկալումը ավելի արդյունավետ է գնահատում:

Կորոնավիրուսային համավարակով և պատերազմով պայմանավորված՝ տուժել են Գրիգոր Լուսավորիչ մասնաճյուղը և արցախյան մասնաճյուղերը, որոնցից «Շուշի» և «Հադրութ» մասնաճյուղերի մասով, ցավոք, պարզ է, իսկ Արցախի մյուս մասնաճյուղերի մասով դեռևս հստակ դիրքորոշում և որոշումներ չկան:

Թղթակցային հարաբերություններ և դրամական փոխանցումներ

Բանկը ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի հետ թղթակցային հարաբերությունների հաստատման, տեղական և միջազգային վճարային համակարգերին անդամակցելու, ինչպես նաև մասնաճյուղային ցանցի ընդլայնման միջոցով, տարեցտարի էլ ավելի է մեծացնում դրամական փոխանցումների իրականացման իր ծավալն ու աշխարհագրությունը:

2020 թվականի ընթացքում Բանկի Գլխամասային գրասենյակում և մասնաճյուղային լայն ցանցում սպասարկվել են միջազգային արագ դրամական փոխացումների հետևյալ համակարգերը.

- Մանի Գրամ
- Ինտելէքսպրեսս
- Ռիա
- Կոնվերս Թրանսֆերս
- Յունիստրիմ

Բանկը թղթակցային հարաբերություններ ունի 27 բանկերի հետ, որից 19-ը ոչ ռեզիդենտ բանկեր են: Բանկը նոստրո թղթակցային հաշիվներ ունի 8 ռեզիդենտ և 19 ոչ ռեզիդենտ բանկերում, իսկ Բանկում լորո թղթակցային հաշիվներ ունեն 4 ռեզիդենտ և 4 ոչ ռեզիդենտ բանկեր:

31.12.2020թ. դրությամբ Բանկը թղթակցային հարաբերություններ ունի հետևյալ ոչ ռեզիդենտ բանկերի հետ՝ Բանկ Օֆ Չայնա Գլխամասայն գրասենյակ, Բանկ Օֆ Ջորջիա ՓԲԸ, Բանկ Օտկրիտիյե Ֆին.Կորպ. Միջպետական Բանկ, Նովիկոմբանկ ԱԿԲ ԲԸ, Պրոմսվյազբանկ ԲԲԸ, Ռայֆֆայզենբանկ ԲԸ, Ռայֆֆայզենբանկ ԲԸ Ինտերնեյշնլ ԱԳ, Ռոսսելխոզբանկ, Սբերբանկ ԲԲԸ, Տրանսկապիտալբանկ ՀԲԸ, Ֆորա-Բանկ ՓԲԸ, Բանկա Պոպոլարե Դի Սոնդրիո, Օդդի Բի Էյչ Էֆ, Յունիստրիմ ԱԲ ԲԲԸ, Մոսկովսկի Կրեդիտնիյ Բանկ ՀԲԸ, Եվրասիական Զարգացման Բանկ, Ալֆա Բանկ, Ուկրէկսիմբանկ:

Վարկային ծրագրեր

ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԸ, մշտապես կարևորելով արդյունավետ վարկային քաղաքականության իրականացումը, 2020 թվականին նույնպես շարունակել է միջազգային և ազգային ծրագրերով վարկավորման գործընթացը, մասնավորապես՝ հաշվետու ժամանակաշրջանում գործել են հետևյալ ծրագրերը՝«Տնտեսության կայունացման վարկավորման» (Գերմանահայկական Հիմնադրամ) և «ՓՄՁ ֆինանսական միջոցների հասանելիություն» (Համաշխարհային Բանկ) վարկային ծրագրերը, «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորում» և «Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված» ծրագրերը (.Ազգային հիփոտեքային ընկերությունե ՎՎԿ ՓԲԸ), «Գյուղական ֆինանսավորման կառույց» ԾԻԳ-ի ծրագիրը, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի .Թրփանջյան գյուղական համայնքների զարգացմանե ծրագիրը, «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ «Ուսանողական վարկավորման», «Սպառողական վարկեր զինծառայողներին» և «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրերը, «ՀՀ Գյուղատնտեսության Ոլորտի Աջակցում» ծրագիր, «Գերմանահայկական Հիմնադրամի .Վերականգնվող էներգիայի զարգացում» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր, չվերականգնվող վարկային գծեր, «ABB-ԲԻԶՆԵՍ» Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող վարկեր, վարկային գծեր և օվերդրաֆտներ, «ABB-ԱԳՐՈ» Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր, «ABB-ԱԳՐՈ» .Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումե ծրագրի շրջանակներում տրամադրվող

վարկեր, «ԱԲԲ-ԱԳՐՈ» ՀՀ գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր, «ԱԲԲ-ԱԳՐՈ» ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր, «ԱԲԲ-ԱԳՐՈ» Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր, «ԱԲԲ-ՓՄՁ ԲԻԶՆԵՍ» Արցախի Ներդրումային Հիմնադրամի ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորմանե ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր:

Պլաստիկ քարտեր

Բանկը հանդիսանում է «ԱրՔա», «MasterCard Worldwide» և «VISA International» վճարային համակարգերի լիիրավ անդամ: Քարտերի ընդհանուր քանակը 31.12.2020թ. դրությամբ կազմել է համապատասխանաբար՝ 13,982 , 75,874 և 53,006:

2020 թվականի վերջի դրությամբ Բանկը սպասարկում է 482 POS-տերմինալ, 102 ԱԳՄ և 39 ԱԳՓՄ:

Կադրային քաղաքականություն

2020թ-ի ընթացքում Բանկն իր կողմից իրականացնող մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության շրջանակներում շարունակել է ներգրավել որակյալ մասնագետների, կատարել մարդկային ռեսուրսների հնարավորինս ճիշտ տեղաբաշխում և նվազագույնի հասցնել կադրերի հոսունությունը:

2021թ-ի հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարվա 1181 աշխատակցի փոխարեն Բանկում աշխատում են 1205 աշխատող (469 աշխատող՝ գլխամասային գրասենյակում, 736 աշխատող՝ մասնաճյուղերում):2020թ-ի ընթացքում մասնաճյուղերի և գլխամասային գրասենյակի աշխատատեղերի համալրման նպատակով Բանկում անցկացվել են արտաքին և ներքին մրցույթներ: Մրցույթներին մասնակցել են ընդհանուր թվով 173 դիմորդ, որոնցից արտաքին մրցույթին մասնակցել են 159 դիմորդ, իսկ ներքին՝ 14: 2020թ-ի ընթացքում 95 հոգու հետ կնքվել է աշխատանքային պայմանագրեր: Կազմակերպվել է ուսումնական պրակտիկա Հայաստանի առաջադեմ ԲՈՒՀ-երի թվով 227 ուսանողների հետ, որոնցից վճարովի ուսումնական պրակտիկա անցել է՝ 139 ուսանող, իսկ 88-ը՝ անվճար:

Խորհրդի նախագահ	Արսեն Միքայելյան
Խորհրդի անդամ	Սերգեյ Արզումանյան
Վարչության նախագահ	Արտավազդ Սարգսյան
Գլխավոր հաշվապահ	Նարինե Սարգսյան